# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ք. Գավառ, Գր. Լուսավորչի 12
հեռ. (0264) 2-34-23
gavarmeria@rambler.ru

Ելից N Ա-2040 «28» 12 2012թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գրիգորյան

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 30 հոդվածի 8-րդ կետի պահանջով, Ձեզ ենք ներկայացնում Գավառ համայնքի ավագանու N 11 նիստի որոշումները:

Առդիր 8 թերթ:
6

Հարգանքով՝

Գ. Ե. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կատ. աշխատակ ազմի
քարտուղար Կ. Մանուկյան
հեռ. 2-76-69

18 01 2013թ
232-13

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք,
ք. Գավառ, Գր. Լուսավորչի 12
E-mail gavarmeria@rambler.ru
www.gavariqaghaqapetaran.am
հեռ. (0264) 2-34-23

## ՈՐՈՇՈՒՄ
26 դեկտեմբերի 2012թ. թիվ 54

Նիստին մասնակցում էին Գավառ համայնքի ավագանու 15 անդամներից 11-ը՝
Ս. Ամիրխանյան, Կ. Խաչիկյան, Ա. Դվոյան, Պ Մարտիրոսյան, Ս. Ղարիբյան, Մ. Մարինոսյան, Դ. Հովեյան, Ա. Մարուխյան, Պ. Հակոբյան, Ա. Հովեյան, Ա. Հասասյան

ՈՐՈՇՈՒՄ 54

### ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՄԻՆՉԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԸ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՊԱՌՔՆԵՐԻ ԴՈՒՐՍ ԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին" ՀՀ օրենքի ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության 2003 թ. հուլիսի 25-ի թիվ 03/20-Ն հրամանով հաստատված „Հարկային տեսչություններում հարկ վճարողների անձնական հաշվի քարտերի վարման հարցերի վերաբերյալ" կարգի դրույթներով, նկատի ունենալով, որ թվով 25 իրավաբանական անձանց հողի հարկի բազան Գավառի տարածքային հարկային տեսչության կողմից Գավառի քաղաքապետարանին է հանձնվել տեղեկատվական ավտոմատ համակարգի ծրագրով նախատեսված ժամկետից ուշ, որի պատճառով այդ կազմակերպությունների համար օրենքով սահմանված արտոնությունների մուտքագրումը տեղեկատվական ավտոմատ համակարգ դառնում է անհնարին, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Վերոհիշյալ կազմակերպությունների համար „Գույքահարկի և հողի գծով առաջացած ապառքների մասին" օրենքով սահմանված արտոնությունները հաշվարկելու և ավտոմատ տեղեկատվական համակարգ մուտքագրելու համար ստեղծել հանձնաժողով
2. Հանձնարարել հանձնաժողովին՝ հաշվի առնելով տեղակատվական ավտոմատ համակարգի ծրագրային փոփոխությունը, հողի հարկի և գույքահարկի հաշվեքարտերի 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա սկզբնական մնացորդը մուտքագրել տեղեկատվական ավտոմատ համակարգ՝ որպես հիմք, իսկ տեղեկատվական ավտոմատ համակարգում հողի հարկի և գույքահարկի գծով 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա մնացորդը՝ արխիվացնել:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք,
ք. Գավառ, Գր. Լուսավորչի 12
E-mail gavarmeria@rambler.ru
www.gavariqaghaqapetaran.am
հեռ. (0264) 2-34-23

# ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2012թ. Թիվ 55

Ք. ԳԱՎԱՌ ՀԱՑԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍ, ԲՈՒՌՆԱԶՅԱՆ ՓՈՂՈՑ N 43/1 ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 13.85Ք.Մ. ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ /12.55Ք.Մ. ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ/ ՎԱՐՍԱՎԻՐԱՆՈՑԸ ԵՎ ՎԱՐՍԱՎԻՐԱՆՈՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0.003154ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԿԱՌՈՒՅՑԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ, ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20 կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. N912-Ն որոշման պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ Հացառատ թաղամաս, Բուռնազյան փողոց N 43/1 շինություն հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, օրինական ճանաչված 13.85ք.մ. արտաքին մակերեսով /12.55ք.մ. ներքին մակերեսով / վարսավիրանոցը և վանսավիրանոցի զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 0.003154հա մակերեսով հողամասը համապատասխանաբար 2770 ՀՀ դրամ և 12620 ՀՀ դրամ տարեկան վարձավճարներով՝ վարձակալական իրավունքով տարամադրելու ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Գառնիկ Ռաֆիկի Սահակյանին մինչև 2015թ. օգտագործման ժամկետով:

Կողմ (11) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՀԱՄԱՍՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ
ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ
ԴԱՎԻԹ ՀՈՎԵՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ԽԱՉԻԿՅԱՆ
ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ
ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ
ՊԱՐՈՒՅՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
ՍՈՒՐԵՆ ՂԱՐԻԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք,
ք. Գավառ, Գր. Լուսավորչի 12
E-mail gavarmeria@rambler.ru
www.gavariqaghaqapetaran.am
հեռ. (0264) 2-34-23

## ՈՐՈՇՈՒՄ
26 դեկտեմբերի 2012թ. թիվ 56

## *ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ԶՈՀՐԱԲ ԽԱԺԱԿԻ ԲԱԼԱԲԵԿՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 11 հոդվածի 5-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով զինծառայության ընթացքում զոհված զինծառայող Զոհրաբ Խաժակի Բալաբեկյանի ընտանիքի բնակարանային սուղ պայմանները, Գավառ համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ ՀՀ պաշտպանության սոց. Վարչություն ներկայացնելու համապատասխան փաստաթղթեր՝ զոհված զինծառայող Զոհրաբ Խաժակի Բալաբեկյանի ընտանիքին բնակարանային

Կողմ (11) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՀԱՍԱՍՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ
ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ
ԴԱՎԻԹ ՀՈՎԵՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ԽԱՉԻԿՅԱՆ
ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ
ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ
ՊԱՐՈՒՅՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
ՍՈՒՐԵՆ ՂԱՐԻԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք,
ք. Գավառ, Գր. Լուսավորչի 12
E-mail gavarmeria@rambler.ru
www.gavariqaghaqapetaran.am
հեռ. (0264) 2-34-23

## ՈՐՈՇՈՒՄ
26 դեկտեմբերի 2012թ. թիվ 57

## ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՏՔԻ ՍԿԶԲՆԱՄԱՍԻ ՀԱՏՎԱԾԸ ՀՐԱՆՏ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16 հոդվածի 20 կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N2387-Ն որոշմամբ, Գավառ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Ազատության փողոցի քաղաքի մուտքի սկզբնամասի հատվածը անվանակոչել Հրանտ Հակոբյանի անունով:

Կողմ (11) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՀԱՄԱՍՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ
ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ
ԴԱՎԻԹ ՀՈՎԵՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ԽԱՉԻԿՅԱՆ
ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ
ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ
ՊԱՐՈՒՅՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
ՍՈՒՐԵՆ ՂԱՐԻԲՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք,
ք. Գավառ, Գր. Լուսավորչի 12
E-mail gavarmeria@rambler.ru
www.gavariqaghaqapetaran.am
հեռ. (0264) 2-34-23

### ՈՐՈՇՈՒՄ
26 դեկտեմբերի 2012թ. թիվ 58

### ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

### ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայնություն տալ ընդունել Գավառ համայնքի ավագանու կանոնակարգը /հավելված 1/
2. Ուժը կորցրած ճանաչել 07.11.2008թ. թիվ 9 նիստի որոշմամբ հաստատված կանոնակարգը:

Կողմ (11) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՀԱՍԱՍՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ
ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ
ԴԱՎԻԹ ՀՈՎԵՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ԽԱՉԻԿՅԱՆ
ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ
ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ
ՊԱՐՈՒՅՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
ՍՈՒՐԵՆ ՂԱՐԻԲՅԱՆ